

ՏԱՄՆ ՆԻ ՎԵՏԵՐՈՐԴ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ հնարաւոր է.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կարողական տարածանքութիւններ. Ներքին լուս-
նի.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակաց կար-
ծիք և սպառազնութիւն. Նամակ Թիֆլիսից:
Արտաքին լուսնի.—ՀԵՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ.—ԲՈՐՈՍԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի
քանի օր Ղարաբաղի հանքային ջրերում:

ՄԻԹԷ ՀՆԱՐԱՌՈՐ Է

Անկախած ռուսաց պետութեան իւրա-
քանչիւր քաղաքացին սարսափով կարգաց
կուրսի-խարթիւման երկաթուղու վրա ար-
քայական գնացքի խորտակման մասին լուս-
նը: Թագաւորական ընտանիքը հրաշքով
ազատվեց հաստատ մահաց:

Եւ այժմ ամեն մարդ սկսեցին մտածում
է. եթէ երկաթուղային վարչութիւնները
այդքան անհոգ, այդքան անխիղճ կերպով
են վերաբերում դէպի այն գնացքները, ո-
րոնց մէջ ճանապարհորդում են Բարձրա-
դոյն Անձինքը, Դրեան աւելի մեծ անփոյ-
թութեամբ գործիչները դէպի ճանապար-
հորդող հասարակ մահկանացուները: Պե-
տերբուրգի պաշտօնական թերթի խօսքերի
վրա հիմնվելով հեռագիրը հաղորդեց մեզ,
որ խորտակման տեղի վրա ընկնելի տակ
զրկւած գերանները փոսած էին և ննթա-
ղում են որ դա է եղել գնացքի խորտակ-
ման պատճառը: Թագաւոր կայսրը իր ձեռ-
քով վերցրեց փոսած գերանների կտորնե-
րից մէկը և յանձնեց այդ կտորը ժան-
պարհաների օֆիցերին, որպէս զի գործի
քննութեան ժամանակ սա ներկայացնէ
դատարանին այդ իրական ապացոյցը:

Ահա, ուրեմն, իրանց անձնական շահե-
քը, իրանց գրպանի օգուտը աչքի առջեւ
ունենալով, որպիսի յանցաւոր անհոգու-
թեամբ են վերաբերում դէպի իրանց
պարտաւորութիւնները մեր պաշտօնեանե-
րը: Այժմ երբ քիչ էր մնում կործանվում
էր ամբողջ կայսերական ընտանիքը, որը
միայն մի հրաշքով փրկվեց, կարող ենք

համարձակութեամբ և անվախ ասել, որ
ազա՛հ, շահաւէր, եսամոլ պաշտօնեաներից
ոմանք իրանց անձնական օգտի, իրանց
գրպանի համար են աշխատում միայն, ան-
տես առնելով ընդհանրութեան շահերը:
Եւ իրանց այդ անձնական շահերի օգտին
նոյն իսկ վտանգի մէջ են դնում Թագաւո-
րական Տոհմը և Գահը, մի և նոյն ժամա-
նակ ամեն տեսակ արգելքներ դնելով ի-
րանց արարքների մասին ճշմարտութեա-
նը, որպէս զի սա ազատութիւնը չը հասնի
մինչև զահի պատուանդանը:

Կատարված սարսափելի անցքի տխրալի
տպաւորութեան տակ մարդս սկսեցին
ստիպված է այժմ խոստովանել, որ միմի-
այն ազգի կողմից ազատութեան արտայայտ-
վող ճշմարտութիւնը կը կարողանայ ամե-
նահարեւել բերօրեկամայի մի մասի հա-
րստահարիչ և զիշտօրէ ինտրինկտները,
կը կարողանայ սահման դնել ինչ ու ինչ
կական անյադ շահասիրութեանը, կը
կարողանայ վերահսկել զեղծումներ գործող
պաշտօնեաների վրա:

Վերջապէս պաշտօնեաների անսանձ, ա-
զա՛հ շահասիրութիւնը այս օրերս այնտեղ
հասաւ արդէն, որ քիչ էր մնում նրան
զոհ էր դնում Թագաւորական ամբողջ ըն-
տանիքի հարկը միլիոնի համար թանգա-
զին կեանքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր լրագրի անցեալ համարում մի քանի տե-
ղեկութիւնները արդէն հնչեց էր գուշակել, որ
Ախալցխայի հայոց երկուս դպրոցների տես-
չութեան հարցը.—կուսածաղիկ պէտք է դառ-
նայ: Եւ ինչպէս երևում է մեզ հասած տեղեկու-
թիւններից, այդպէս էլ եղել է: Թ. Խոջամիրեան,
որ արդէն երկու տարի է առաջ ուսուցիչ է նը-
շանակված, ընտրված լինելով հոգաբարձութեան
կողմից և հաստատված լինելով դպրոցական կա-
նոնադրութեան համեմատ, թեմական առաջնոր-

դաւառի Զօթ թուրքաբնակ գիւղին է) անկանի
ծաղիկազարդ լեռան ջրաւ, ի թիկանց որոյ բըզ-
խի ջերմուկ հանքային ջուրը, ուր այժմ յաճա-
խեն հիւանդը և բազումք ի նոցանէ գտանեն զա-
ռուղութիւնս:

Այդ ջուրը բղկնելով Կովկասի շտաբի հրատա-
րակած քարտէզի որոշումով, 11,000 ֆուտ
բարձրութիւն ունեցող սարից և մի քանի քալ
անցնելով, թափվում է Թաւթաւ գետը: Այդ սա-
րը իր հարաւային և արեւմտեան ամեն փեշերից
բղկնելով է սկսած եռալու աստիճանին հա-
նող տաքութիւնից մինչև սառն հանքային ջրեր,
որոնց բաղադրութիւնն է՝ ամոնիումի մասը բոքս
(natrum boricum), յետոյ աղ, նաթի և երկաթի
Նա խմելով է առանց զոգուելու և եթէ չաքա-
րով քաղցրացնուի է, շատ նման է սալիցե-
լեան աղի (natrum salicilicum), որը գերանական
բժշկութիւնն էլ գործ է դնում բէլմատիզմի (ու-
կրացաւի) դէմ: Այդ հանքային ջուրը ժողովրդա-
կան բժշկութեան մէջ գործ է դրվում բէլմատիզ-
մի, պարալիչի, վէրքերի և նոյն իսկ կրծքացաւի,
ստամոքսի և աղիքների հիւանդութեան (желудка и кишек) դէմ և պէտք է խոստովան-
ված, որ նա շատ աշող բժշկում է, մանաւանդ
բէլմատիզմը, և եթէ շտաբներին չէ բժշկում, դա
էլ ուղղակի բժշկի ու յարմարութիւնների բացա-
կայութիւնից է, որովհետեւ այդտեղ, վտառու-
թեամբ կարելի է ասել, որ մինչև այժմ ոչ մի
բժիշկ չէ այցելել, իսկ յարմարութեան կող-
մից չէ կարելի գտնել երկու քառակուսի սաժե-
նաչափ հարթ-հաստաւոր տեղ, ոչ մի շինութիւն,
նոյն իսկ տնակ չը կայ այդտեղ, հիւանդները

դից, բողբ է ներկայացնում կաթողիկոսին, պըն-
դելով իր իրաւունքների վրա, և յայտնելով որ
պ. Արխողում Գովհաննիսեանի տեսուչ նշանակե-
լը խախտում է իր իրաւունքները, ոչնչացնում է
հոգաբարձութեան ընտրութիւնը և առաջնորդա-
կան հաստատութիւնը: Խնքն ըստ ինքեան ուրա-
խալի է, որ պ. Գովհաննիսեան տեսուչ է նշա-
նակվում մի այնպիսի մեծ դպրոցում, ինչպէս է
Ախալցխայի դպրոցը, քանի որ պարոնը, իր ան-
ցեալ գործունէութեամբ յոյս է տալիս, որ կա-
րող է մեծ օգուտներ տալ Ախալցխային: Մենք
միշտ համակրանքով ենք խօսել պ. Գովհաննի-
սեանի մանկավարժական գործունէութեան մասին:
Սակայն այս դէպքում խնդիրը բոլորովին ուրիշ
կերպարանք ունի, և պ. Գովհաննիսեանի Ախալ-
ցխա գնալը նախ և առաջ մեծ տարածաշու-
թիւնների դուռ է բացանում: Դպրոցում արդէն
կայ մի աւագ ուսուցիչ, որը երկու տարի է գոր-
ծում է, և այս տարի էլ սկսել է իր պաշտօնա-
վարութիւնը և ուսումնական տարվանից երկու
ամիս էլ արդէն անցել է: Կարելի է առաջ ու-
սուցչին կամ տեսչին արձակել, կամ խել նրա-
նից նրա պատճառը և իրաւունքները, բայց այդ
բանը պէտք է անել կամ ուսումնական տարվայ
վերջը և կամ պայման կապելու ժամանակ:
Ուրիշ կերպ վարելի, կամ անել այնպէս, ինչ-
պէս արված է պ. Գովհաննիսեանի և պ. Խոջամի-
րեանի վերաբերութեամբ, կը նշանակէ ոտի տակ
տալ դպրոցական կազմակերպութեան ամենաա-
ռաջին պայմանները:

Դժուար է մինչև անգամ հաւատալ, թէ ինչ-
պէս կարելի էր մի և նոյն դպրոցում երկուրդ
տեսուչ նշանակել ուսումնական տարվայ կիսին,
քանի որ նոյն դպրոցում մէկ ուրիշ տեսուչ ար-
դէն կայ, և քանի որ նրան հեռացնելու համար
ոչ պատճառ կայ և ոչ հիմք:

Մենք մինչև անգամ կարծում ենք, որ պ. Ա-
րխողում Գովհաննիսեան, համաձայնելով Ախալ-
ցխա գնալ իրեն տեսուչ՝ զանազան թիւրիմա-
ցութիւնների դոհ է եղել: Նա կամ չէ իմացել,
որ Ախալցխայում կայ հոգաբարձութիւնից ընտր-
ված և առաջնորդից հաստատված աւագ ուսու-
ցիչ, որը և կաղմը է այս տարվայ ամբողջ ու-
սուցչական խումբը, և կամ իմանալով այդ բոլո-

ստիպված են բաց օդի, անձրևների և մառախու-
ղի (օրոնք անպակաս են) տակ պառկել, իսկ
վիթը ինչ ունեւորները պառկում են վրանների
տակ, որոնք այնու ամենայնիւ ցրտի և խոնառու-
թեան առաջը չեն կարող առնել: Զանազաբարձ
դէպի այդ ջրերը,—չը հաշւած դեռ հեռու տեղե-
րից մինչև այդ ձորի շրջանը,—և ձորի մէջ իջնելը
այնքան անհարթ, վտանգաւոր և բարձր է, որ կա-
րելի չէ լինում ձիով իջնել և բարձրանալ: Գրանց
հետ միացեալ չըջակայքում ապրող թաւաքեանայ
թուրքերի առաջակութիւնը և վայրենութիւնը և ա-
հա կատարեալ կարծիք կարող էր կազմել այդտեղ
յաճախող հիւանդների դրութեան մասին: Այդ
ջրերի մէջ ամենաշատը 10 րոպէ կարելի չէ լի-
նում մնալ և սկսած երկու անգամից մինչև հինգ
անգամ լողանում են, որից յետոյ մարդ այնքան
է քրտնում և թուլանում, որ զբօսնել անգամ
դժուարանում է:

Մենք ևս ունենալով ոսկրացաւ հիւանդութիւ-
նը, երեանից գալով այստեղ, Նոր-Բայազետ, շտա-
պելիք՝ նախ այդ ջրերում բժշկվել և մի քանի
ընկերների հետ ճանապարհ ընկալել դէպի այդ
ջրերը: Զանազաբարձ Նոր-Բայազետից նախ անց-
նում է Գեղամայ ծովափից հեռու բարձրա-
ւանդակներով մօտ 8 վերստ, այնուհետեւ ամ-
բողջ մէկ և կէս օր անցնում է Գեղամայ
լճի ափերով, որը մի տեսակ հրճուանք է
պատճառում և ճանապարհորդին երբեք զգալի չէ
ճանապարհի երկարութիւնը, որը չըջապատված է
հայ և թուրք գիւղերով, մարգագետիններով և
արտերով: Այդ լճի մէջ թափվում են մի քանի
տանեակի տեսակ տեսակ ձկնիկներ Նարեկոս գե-

րը, մի ուրիշ հիւք է ունեցել և մի ուրիշ պատ-
ճառաբանութիւն է ստացել:

Սակայն ինչ և չը լինի այդ պատճառա-
բանութիւնը, նա համակրելի չէ, քանի որ
նա խախտում է դպրոցական կազմակերպութեան
և ինքնավարութեան հիմքը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ, հոկտեմբերի 21-ին, Նոյս Կայսերա-
կան Մեծութիւնների վտանգից ազատվելու առի-
թով, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում գոհացո-
ղական մաղթանք կատարվեց, ներկայութեամբ
դպրոցի տեսչի, հոգաբարձուների, ուսուցչիների
և աշակերտների: Մաղթանքից առաջ դպրոցի
տեսուչ հայր Բէդիսաղարեան մի աղջու ճառով
բացատրեց ներկայ եղողներին այդ օրվայ նշա-
նակութիւնը:

Հոկտեմբերի 21-ին, ուրբաթ օրը, Թիֆլիսի
Միքայելեան Արհեստաւարաց դպրոցում գոհացո-
ղական մաղթանք կատարվեց Թագաւոր Կայսրի
և Նրա Ընտանիքի սարսափելի վտանգից ազատ-
վելու պատճառով: Թիֆլիսի քաղաքային ուսում-
նարանական վարչութեան կարգադրութեամբ,
Արհեստաւարաց դպրոցում հաւաքվեցան Թիֆլիսի
քաղաքային տարրական դպրոցների բոլոր աշա-
կերտները և աշակերտուհիները իրանց տեսչով,
ուսուցչիներով և ուսուցչուհիներով: Մաղթանքին
ներկայ էին նոյնպէս արհեստաւարաց դպրոցի
տեսուչը, ուսուցչիները և բոլոր ծառայողները:

Մաղթանքը կատարվում էր ուսումնարանի բա-
ղում, բացօդային: Մաղթանքից առաջ Արհեստա-
ւարաց դպրոցի ուղղափառ կրօնուսույց Գուրգէնի-
ձէ քահանայն բացատրեց աշակերտներին այդ օր-
վայ խորհրդաւոր նշանակութիւնը, որից յետոյ
սկսվեց մաղթանքը դպրոցի աշակերտների երգե-
ցողութեամբ:

ՆԵՐՔԻՆ-ԱՍՏԱՅԻՑ մեզ հաղորդում են հետե-
ւեալը: Հոկտեմբերի 18-ին, երեկոյան ժամը
8-ին այստեղ այրվեց 50 սայլից բաղկացած
մի խոտի դէղ. հրդեհը տեղեց ամբողջ երկու ժամ
կրակի շուրջը խռնված մարդիկ չէին կարողա-

տեր, գետակներ և առուակներ: Թէ այդ դեպքը
և թէ ծովի ձկնորսութիւնը արվում է կառավա-
րութիւնից (բացի մի քանի տեղերից, որոնք պատ-
կանում են ծովազրկայ գիւղերին) կապաւով չորս
տարին մի անգամ, որի չորրորդ տարում ձկնոր-
սութիւնը արգելվում է և այս տարի, կապաւա-
ծաւանակի վերջին տարին լինելով, ձուկ որսա-
լը արգելված է: Չը գիտեմ այդ, թէ մի ուրիշ
պատճառով այժմ հիւանդութիւն է տիրում ծովի
ձկների մէջ և ձկններ հարկւր հաղաւորելով
ստատկած թափված են ծովի ափին և զարմա-
նալին այն է, որ այդ ձուկը չեն ուտում ոչ ընա-
կիչները և ոչ թուշուները:

Աւելորդ համարելով այդ գաւառի (Գեղարքու-
նիք) պատմական և հնադրական նկարագրու-
թիւնը, որովհետեւ հանգուցեալ Ջալալեան եպիս-
կոպոսը արդէն մանրամասնաբար նկարագրել է
և հետաքրքիրները կարող են գտնել նրա ճանա-
պարհորդութեան 106—130 երեսներում (մասն
Բ.), մենք մի փոքր կը խօսենք շրջակայ գիւղերի
և ժողովրդի ներկայ դրութեան մասին: Գիւղերի
մէջ նշանաւորներն են Ներքի-Աղիամանը, որը հե-
ռուից մի ծառաստանի է նմանում. չը նայելով
ժողովրդի տգիտութեանը, այդտեղ, նոյն իսկ Նոր-
Բայազետից աւելի, դարգացած է բուսականութիւ-
նը. կան այդտեղ բայց բազմաթիւ ուռի ծառերից,
նոյնպէս և պտղատուներ՝ տանձի, խնձորի, չլորի,
ծիրանի ծառեր, վարդի թփեր և այլն: Բաւար-
դէշար, որը ընկած է Գեղամայ լճի ուղիղ հարաւ
արեւելեան ծայրում և որը առեւտրական կենտրոն
է ծովազրկայ գիւղերի համար. հետաքրքիր են
Գեօղակ-Բուլաղ գիւղի և Գլղ-Վանք (Մաղինեց)

նում մօտենալ կրակին, այնքան սաստիկ էր հրդեհը: Որովհետև տեղիս անհրաժեշտ մասը փայտաշեն էր, այդ պատճառով երկուդ էլն կրում էին մի գույք բոլոր տները հրդեհի դառնանք, բայց բարեբաղդաբար, հրդեհը բաւականացաւ այս անշնան աւարով:

ԿՈՂՐԻՑ մեզ գրում են: «Կողբը, որ գտնուում է հինգիւրկեր և տասնաութ բաղմադաւրեան Արմաւիր Երուսաղեմի տաւրաւանից 2 1/2 ժամ հեռավորութեան վրա գտնւի արեւմուտք, իր հաղարամեայ գոյութեան օրից չունէր տակաւին մի քաղցրահամ ջուր: Թէև այժմ էլ կան մի քանի աղբիւրներ, բայց դրանց ջուրը աղի է և դառնահամ: Կողբի ջրերի դառնահամ լինելը բացատրուում է նրանով, որ Կողբի հողը աղ է պարունակում իր մէջ և տարիների ընթացքում իր բորակային հիւթը տալով մայր հողին, աղիացնում և դառնացնում է ոչ միայն աղբիւրները, այլ և գիւղիս երկու կողմից վազող վտակները: Բայց այս տարի, հայ վաճառական պարագետ Տէր-Մանանիանի չորհրդով կողբն էլ ունեցաւ մի մարդու և լաւ աղբիւր: Վերջինիս պարոնը 800 ռ. ծախսեց և Սալ-աղբիւր կոչւած քաղցրահամ ու սառնորակ ջուրը գիւղը բերել տուց: Այսուհետ, որ մի և նոյն պարոնը դիտաւորութիւն ունի հինգիւրկեր վերանորոգել մեր բաղմադաւր մասնաւորը: Եղինք Կողբացու մատուռը, որը այժմ քայքայված և խորխուր գրութեան մէջ է:»

ԹԵՂԻՍԻՑ մեզ գրում են: «Անցեալ սեպտեմբեր ամսի և այս ամսի ընթացքում պատահել են մեզ ամառ մի քանի սպանութիւններ: Սեպտեմբերի 29-ին ոստիկանութեան մի ստորին պաշտօնեայ ընկնում է մի հովուի ետևից, որին ոստիկանութիւնը ընդունում է յայտնի չարագործներից մէկի տեղ: Հասնելով հովուին քաղաքից մի վերստ հեռավորութեան վրա, ոստիկանը արձակում է նրա վրա իր ընկալիքը, բայց հովուը, չը նայելով որ վերադարձած է լինում, հանում է իր դաշոյնը և մորթում է ոստիկանին, ապա ինքն էլ ընկնում է նոյն տեղը: Հովուը բանտարկվում է և մի քանի ժամանակից յետոյ ստացած վերքերից մեռնում է: Սեպտեմբերի 30-ին դարձեալ մի հովու վէճ է ունենում իր երկու զենակաւորների հետ. վէճը հեղհեղտեալ տաքանալով, հովուը հանում է դանակը և խրում է իր զենակաւորի թէ մէկի և թէ միւրի փորը: Ստացած վերքերից միւրը մեռնում է, իսկ միւրը անյուսպ զրութեան մէջ է: Չարագործը իսկույն վազում է ոստիկանատուն և ինքն յայտնում է իր արած յանցանքի մասին: Նրան անմիջապէս կալանաւորում են: Հոկտեմբերի 6-ին գիւղերը դարձեալ նոր սպանութիւն է պատահում. անյայտ չարագործները մի այգու մէջ մորթում են տեղական բնա-

կոչված հին վանքի մէջ գտնվող Դաշ-Ղափու անուանվող մատուռը, որը ուխտատեղի է թէ հայ և թէ թուրք հասարակութեան համար, ահագին աւերակներով և շատ ջրաղացների հետքերով, որտեղ գտել են մինչև անգամ պղնձեայ ափսէներ: Այստեղ ուշադրութեան արժանի է մի բան, որ Ջալալեանը ոչինչ չը խօսելով այս աւերակների մասին (գուցէ նրան ցոյց չեն տուել, եթէ ոչ նկարագրելով այդ գաւառի նոյն իսկ տապանադերը, չէր մոռանայ այդ եւ), մեր վերև յիշած Բասար-Գէշար գիւղը անուանում է պատմական Վասակաշենը, այն ինչ այդ գիւղում ոչ մի պատմական հետք կամ աւերակ վանք չը կայ: Մենք հաւանական ենք դնում, որ Վասակաշենը այդ Դաշ-Ղափու աւերակներն են, որոնք թէ ահագին տեղ են բռնում և թէ ունեն մի երկու եկեղեցիների և շատ ջրաղացների հետքեր և թէ Միթիթարեան հայրերի հրատարակած քարտէզի վրա՝ Վասակաշենը նշանակված է ուղիղ այն տեղում (Գեղամայ լճի հարաւում) որտեղ ընկած են այժմ Դաշ-Ղափու աւերակները: Բայց մեր նաև թուրքաց Զօթ (պատմական Սօթ գաւառական քաղաքն է) և Մաղրա գիւղերը իրանց հարուստ արօտատեղերով, որոնց վրա արածում են հազարաւոր կովեր և եղնէր: Այդ տաւարը, որ հաւաքում են Նոր-Բայազէտի շուրջները, յայտնի են նոյն իսկ Թիֆլիսի մասփաճառներին: Զօթ գիւղում կայ մի հին վանք, որը ուխտատեղի է շրջակայ թուրքերին և որտեղ այդ գիւղացի թուրքերը կատարում են իրենց Նովրուզ և Ղուրբան բայրամների տօները, և մի բան որ ամօթ է բերում նոյն իսկ մեզ հայերիս, այդ այն է որ

կիւնիւրից մինչև Ասում են որ սպանութեան պատճառը վրէժխնդրութիւնն է եղել:

Ստացանք ՏԱՄԲՈՎ քաղաքից, ինժեներ Համբարձում Կարապետեանից 50 բուրլի, որ նուիրողը խնդրում է յատկացնել այն գումարին, որը կազմվում է հանգուցեալ Բաֆֆիի հեղինակութիւնները հրատարակելու համար:

ՆԱԼԶԻԿՑ մեզ գրում են հոկտեմբերի 16-ից հետեւեալ: «Մինչև այժմ դեռ յայտնի չէ, թէ ինչ է պատահել անգլիացի ճանապարհորդների՝ պրօֆէսոր Դոնլիին, գործարանատէր Ֆօկսի և նրանց շվեյցարացի ուղեկիցներին՝ Շարէյսի և Ֆիշերի հետ, որոնք դեռ ևս օդոստոս ամսին Նալ-ձիկի շրջանի Բեդլինգի անտառված տեղից ուղւում էին լեռնային սառուցներով անցնել դէպի Սվանէթի Բօլկարիա շրջանը: Ոստիկանութիւնը մի քանի անգամ ջանքեր արեց նրանց գտնելու, բայց առանց հետեւալքի: Յիշեալ չորս հոգին օդոստոսի 13-ին դուրս են դալիս Բեդլինգի-Տուրե-նէլ ասված գիւղից մի տեղացի բնակիչ թուրքի հետ դէպի Կաշկանտաու ասված լեռան սառուցները, նոյն օրը երեկոյան մօտենում են այդ սառուցներին, վրան են դնում այդտեղ ու գիշերում են: Հետեւալ օրը թուրքին թողնում են վրանի մէջ, իսկ իրանք բարձրանում են տառուցների վրա: Առաւօտեան եղանակը լաւ է լինում, երեկոյան մառախուղ է երևում, իսկ միւս օրը սկսում է անձրև և ապա ձիւն գալ: Ճանապարհորդները այդ օրը չեն վերադառնում, այլ վերադառնում են 16-ին օդոստոսի, կէս օրին Օդոստոսի 17-ին սեղանի վրա նրանք հասնում են իրանի տակ, իսկ 18-ին վաղ առաւօտեան իրանց իրեկցները բարձրում են հետեւներն ունեցած միակ ձիւն վրա ու թուրքի հետ յանձնարարական նամակով ճանապարհ են դըցում դէպի Բօլկարիայի շրջանը, իրանց թուրք ման Ռիգէրին, որին առաջուց Տուրենէլ գիւղից ուղարկած էին լինում Բօլկարիա, պատուիրելով նրան այնտեղ ապաստել իրանց գաղտն: Թարգմանի նին նրանք գրում են թէ սառուցներով անցնելու են դէպի Գիլտաու լեռան տակ գտնված պահպանների տունը, ուր և յոյս ունեն հասնելու: 5—6 օրից յետոյ, և խնդրում են նշանակված միջոցին ուղարկել Բօլկարիա վերջինիս տեղը՝ ձիւնին, հաց, ծխախոտ և մի քանի զոյգ կօշիկներ, որովհետև զիտաւորութիւն ունեն այդ տնից անցնել լեռնաշղթայի գագաթների վրայով դէպի Բուլկարիա նահանգի Գէշա գիւղը: Թարգմանը ուղարկում է պահանջած իրերը, բայց ուղարկած թուրքը ճանապարհորդներին այնտեղ չէ գտնում և մի քանի օր սպասելուց յետոյ՝ յետ է դառնում: Իսկ թուրքիսան Ռիգէր ճանապարհորդներին 28 օր Բօլկարիայում սպասուող յետոյ, սեպտեմբերի 14-ին գալիս է Նալձիկի յայտնում է

մեր յիշած այդ վանքի վրա հսկում է տեղացի մի թուրք, որա համար վարձել է մի ծառայ, որը թէ մաքրում է եկեղեցին և թէ ցոյց է տալիս հետաքրքրվողներին:

Թուրք գիւղացիք պարագայում են անասնաբուծութեամբ և հողագործութեամբ, իսկ հայ գիւղացիք, բացի այդ, մասամբ պարագայում են և ձկնորսութեամբ: Անցեալ 1887 թիւը այդ ժողովրդի համար ամենաթշուառ տարին էր. բերքը սղանքան սակաւ էր, որ ինքը գիւղացին իր խալվարը 10 բուրլով ծախած ցորենը ձմրան կէսից սկսած մինչև այսօր էլ 40 բուրլով է գնում և ուտում. այդ ևս չը կարողանալով դարի է ուտում: Մեզ ճանապարհին գիւղերում պատահում էին այնպիսի բնութանքներ, որ միմիայն մի շապկով կամ արխաւուղով էին պատում և այն էլ այնքան քրքրված, որ մերի մարմինը հարուստի տակից երևում էր: Շատերը նոյն իսկ լոյսերով էին կերակրվում: Այս տարի բերքը բաւական չափ խոտանում է շատերը շտապում էին նոյն իսկ կրտահանել գարնի քաղել և ուտել մինչև հունիս հասնելու: Այս քննարկութեան պատճառն էր, որ այժմ համարեա այդ գաւառի կէս մասը գնացել է Թիֆլիս, Բաթում, Բաքու և ուրիշ տեղեր մշակութիւն անելու համար:

Այդ գաւառի 30 մօտ հայ գիւղերում ոչ մի եկեղեցական դպրոց չը կայ: Գեռ ուսումնաբանները չը փակված Ղարանդու գիւղում կար մի դպրոց, որը ուսումնաբանները փակվելուց յետոյ այնպէս էլ փակ մնում է: Կան այդտեղ երկու հատ ուսուցող սկզբնական դպրոցներ, որոնցից մէկը Մաղրա թուրք գիւղում 30 աշա-

նօտիկանութեանը ճանապարհորդների անհետանալու մասին: Տեղային բնակիչների պատմելով ճանապարհորդների բռնած ճանապարհով դեռ ևս ոչ ոք երբէք չէ անցել: Մենք գրում են որ խեղճերը կամ մնացել են ձիւնի տակ, կամ ընկել են սառուցների ճեղքերի մէջ, մանաւանդ եթէ ճեղքերը ծածկված են ձիւնի շերտով: Մի անգլիացի տուրիստ պ. Վուլէյ, որը սեպտեմբերին պատահմամբ գտնուում էր այստեղ, գնաց Բեդլինգի, անհետացածներին որոնելու համար. նրա հետ ընկերացաւ և այդտեղ պարագայով երկրաչափ պ. Ժուկով: Այդ պարոնները ջանքերն էլ ապարդիւն մնացին: Այս տարի արդէն անհետարին կը լինի գտնել անհետացածների դիակները, որովհետև սարերը արդէն մի քանի անգամ ձիւնել են: Իսկ եկող ամառը, անգլիական աշխարհագրական ընկերութիւնը, անտարակոյս կուղարկէ Կովկաս մի ուսումնական արշաւանը կորած ճանապարհորդներին որոնելու համար:

Մեզ ուղարկված է «Նրախայրեք» վերնագրով մի գրքից, որը ժողովածու է զանազան արձակ և ոտանաւոր գրութեան, հեղինակութիւն Սրինգի: Թէ արձակ և ոտանաւոր գրութեան մէջ մի քանիք բաւական յարմար են մանկական ընթերցանութեան համար. բայց զբոյլը իր բովանդակութեանը նայած, բաւական թանգ է գնահատած, —50 կօպէկ,— և այդպիսով մատչելի չէ մանկական գրադարանների համար:

Տեղական «Новое Обозрение» լրագիրը տեղեկացել է և հաղորդում է իբրև լուր, որ Անդրկովկասեան երկաթուղու գանձարանի ձեռքը անցնելու գործը յետաձգված է անորոշ ժամանակով: Լրագիրը կարծում է, որ այդ յետաձգումը դոնէ երեք տարի կը տևի:

Թէհրանից գրում են «Kacmā» լրագիրն, որ այդ քաղաքի մօտ անցեալ տարի գտնված յախճապակեայ կաւը աղող ապագայ է խոստանում: Նա արդէն մշակված է, և ի նկատի ունենալով նրա լաւ յատկութիւնները, մտադրութիւն կայ հաստատ հիւքերի վրա գնել այդ կաւի արդիւնաբերութիւնը, որով կարելի կը լինի մրցել արտաճանապարհի բերվող յախճապակեայ ամանագէշների և այլ այդպիսի ապրանքների հետ:

Ստացանք այս օրերս լոյս տեսած, 52 երեսից բաղկացած, մի ժողովածու ժողովրդական բանաստեղծութիւնների և բանաստեղծութիւնների, որը կրում է «Աշըղ Ֆիդայու երգեր» վերնագիրը: Ժողովածուի բովանդակութիւնը մի առանձին արժանաւորութիւն չունի, և «բանաստեղծութիւն» կոչվող ոտանաւորներից շատերը արժանի չեն նոյն իսկ ամենափոքր ուշադրութեան, բայց այդ զբո-

կերտներով, միւսը Գեղալ-Ղարա հայ գիւղում 60 աշակերտներով: Ահա այդ գաւառի մասաւոր առաջադիմութիւնը:

Մեր անցած բոլոր գիւղերում, նաև սարերի մէջ կան շատ աւերակ վանքեր, խաչքարեր, տապանաքարեր և այլն, որոնց յիշատակարանները ցոյց են տալիս, որ այդտեղ 300 տարի առաջ բնակվել են հայեր: Եւ իրաւ 1582 *) թիւին, երբ Կովկասի լեզգիները յարձակվեցին Գեղալեանի գաւառի վրա, այդտեղի ժողովուրդը, Մէլիք Շահնազարեանի և Գեղալեանի թուրք թողեց այդ գաւառը, անցաւ Ղարաբաղ և հիմնելով Աւետարանոց (Չանալի) **) աւանը վարանդա գաւառում, *** սկսեց կառավարել այդ ժողովրդին, իսկ նրանց տեղը բռնեցին Լեզգիտաւանից եկած թուրքերը մինչև 1828 թ. ուսումնական պատերազմը, երբ Հին-Բայազէտից և Ալաշկերտից գաղթած հայերը բռնեցին թուրքերի տեղը, նրանց հեռացրին դէպի սարերը և իրանք

*) Հանգուցեալ Ջալալեանը այդ թիւը նշանակում է Ռ.Ա. այն է 1031—1582 թ., իսկ հանգուցեալ Բաֆֆին 1632 թ. («Բամա. Մեղ.» երես 22):

**) Այդ գիւղացի է յայտնի գերբայ Մաղաթովը, որի հայրը Մէլիքեան Գիւլին Մէլիք Շահնազարեանների շրջանին էր («Բամա. Մեղ.» երես 229):

*** Դրա մասին վկայում է և Ջալալեանը «Ի. Նայոց Ռ. Ա. սկիզբն եղաւ աւերանաց աշխարհին Գեղամայ, վասնորոյ բնակիչը նորա ճաւապակեայ անկան յատուր Արցախ և Գարդմանայ (Ջիւղայիլի գաւառ), յայնժամ մէլիք բէշ բնութանօք էլ ի դիւղն Աւետարանոց» և այլն (Ճանապարհ մասն Բ. երես 247):

բովել «սիրողներն» գուցէ ժողովրդական խաղասացութիւնն ևս նմաներ կարող է տալ:

Չանգեզուր գաւառի Ղարաբլիսա գիւղից մեզ գրում են: «Երկու ամիս առաջ ցորենը այստեղ բաւական թանգ էր. սօմարը (մօտաւորապէս 2 պուդ), վաճառում էին 2 ռ. 40 կ., մինչև 2 ռ. 60 կօպ., բայց այժմ ցորենի գինը մի փոքր ընկած է և սօմարն արժէ 1 ռ. 60 կ. մինչև 2 ռուբլի: Տեղային խօշաներն էլ քիչ չեն նպաստում ցորենի թանգացնելուն. նրանք մեծ քանակութեամբ ցորեն են ժողովել և պահում են, որպէս զի դարնան աւելի թանգ գնով վաճառեն:»

Մեզ գրում են ԱՍԽԱՅԻՍԻՑ հետեւեալ: «Քաղաքային ինքնավարութեան իրաւասութեան զաւանակը արդէն լրացած լինելով, հարկ էր յուլիս ամսին դուրսի, ուղարկել և քաղաքացիների ընտրութիւններ կայացնել, սակայն անյայտ պատճառներով յետաձգվել են ընտրութիւնները անորոշ ժամանակով: Արդէն յայտնի է որ քաղաքային վարչութեան վերջին կազմակերպութեան դէմ եղել են բողոքներ նահանգապետին, բայց այդ բողոքները երբ վերադարձվում էին քաղաքային վարչութեան դռանը ներկայացնելու համար, վարչութիւնը իր համար աւելի ձեռնուէր համարում քննարկել բողոքները, գցելով նրանց իր արխիւները: Հինգ վեց անգամ յայտարարութիւններ էին ներկայացվում դուրսի կողմից քաղաքային վարչութեան ելեմտական հայիւնները ընտրութեան ենթակելու, սակայն մինչև այժմ առանց հետեւալքի մնացին յիշեալ յայտարարութիւնները, քանի որ քննարկեան համար հարկաւոր յանձնաժողովը անհետարին է լինում ընտրել և կազմակերպել:»

ԱՍԽԱՅԻՍԻՑ մեզ գրում են: «Անցեալ նամակում յիշել էի քաղաքում անտառային ուսումնարան բացվելու մասին: Այժմ հաղորդում եմ այդ ուսումնարանի մասին մանրամասնութիւններ: Ամբողջ Անդրկովկասի համար այս առաջին անտառային դպրոցն է, որ արդէն բացված է Ախալցխայում: Խրաքանչիւր տարի ընդունվում է միայն ութ աշակերտ, որոնք լինելու են գիւղերից երկու տարվա կուրսով: Երկու տարեկան վճար է 130 ռուբլի: Այս տարի արդէն ընդունված են ութ աշակերտներ. բացառապէս ընդունվում են աղքատ դասակարգից, եկող տարի նոյնպէս ընդունվելու են ութ աշակերտներ: Պահանջվում է 2—4 դասարանական վկայական և դիտաւորապէս երկրաչափութիւնից: Այս տարի ուսումնարանը գոյութիւն ունենալու է քաղաքի մէջ, իսկ եկող ուսումնարանական տարում տեղափոխվում է անտառների մօտ Աջիուրի և Բօրթումի մէջտեղերում: Արդէն եկած է յառաջ յանձնաժողովը դպրոցի տեղի ընտրութեան

բնակեցնելու ծովեզներում, հիմնելով, կամ աւելի լաւ է ասել նորոգելով Նոր-Բայազէտը և Ալաշկերտ գաւառը (մեր յիշած գաւառը կոչվում է Ալաշկերտի մահալ):

Մեր ճանապարհի վերջին կէտերն էին Շօրթա և Դաշ-Ենանդ թուրք գիւղերը. այս վերջինում կան երկու հատ վանքեր: Այդ տեղերից անցնելով մօտ 5 վերստ, որտեղ դրված են հարիւրաւոր վրաններ—արածում են տասն հազարներով ոչխար և տաւար. ճանապարհորդը փոքր Կովկաս սարերի ամենաբարձր անցքով, որ կոչվում է Ղարա-խաչ, մտնում է Գանձակի նահանգի Զիւլաի գաւառի, արօտատեղերով հարուստ և Շուշիի գաւառից 4—5 օր ճանապարհ եկած քոչկան թուրք քննարկեցիների վրաններով բռնած Ալա-գեօլար բարձրաւանդակը: Այնտեղից փոքր առփոքր իջնում է դէպի Գեղալ-Ղարա և ուրիշ բարձրաւանդակներ և մօտենում Տաք-Ջուր (Խա-տի-ուտ) անուանվող թէ բարձրաւանդակին, թէ սարին և թէ ձորին, որտեղ գտնվում է մեր յիշած հանգուցին ջուրը: Առաջին անգամ մարդու աչքին են ընկնում հարուստ արօտատեղեր և ծաղկազարդ մարգագետինները, որոնց վրա արածում են տասնեակ հազարներով գէր և ամբողջ Կովկասում յայտնի առանց դմակի «հէռիկ» անուանվող ոչխարների հօտերը և այնուհետև ձիաների երամակներ: Պէտք է ասած, որ այդ թուրք ժողովուրդը շատ սիրում է մատակ ձիաներ պահել և երեք չորս տարվայ մէջ ահագին երամակ է կազմում: Այդ ձիերը այնքան ընտանեցած են, որ հարկաւոր ժամանակ առանց դժուարութեան ընկնում են:

համար. գործնական տեսակետից ամենակարևոր է անտառի մէջ լինելը: Գարնան ամսադրութիւնը ըստ ամսական է անտառային կ'օրհուկ տօրի տօնը և պաշտօնը»:

Մոսկովայում հոկտեմբեր ամսից սկսելու է հրապարակել «ЭПОХА» ամսագիրը, նոր խմբագրութեամբ Առաջ այդ ամսագրի գլուխ անցած էին «Работа»-ի աշխատակիցները և այդ պատճառով ամսագիրը լաւ հռչակ չունէր: Այժմ ամսագրում մասնակցում են «Сѣверный Вѣстникъ» և դադարած «Устон» ամսագիրները աշխատակիցները և այդ պատճառով «ЭПОХА» իր նոր կազմակերպութեամբ անշուշտ կը գրակ լուրջ ընթերցանութեամբ պարագլուխ հասարակութեան ուշադրութիւնն ու համակրանքը: Ամսագրի հետ կը ծանօթացնենք առաջին համարի հրապարակվելուց յետոյ, իսկ այժմ չենք կարող չը հրաւիրել դրա վրա մեր ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը, մանաւանդ մեր ուսուցիչներին: Գինը շատ մատչելի է, այն է տարեկան 6 ռուբլի, և իւրաքանչիւր տետրակը պարունակելու է մօտ 240 երևա:

Այս օրերս մեր քաղաքը հասած շնորհալի երգչուհի տիկին Ալիս Բարրի յայտնել է, որ տալու է երկու կօնցէրով թիֆլիսի կառուածական բանկի թատրոնում:

«Արմագանը» շաբաթաթիւնը յիշեցնում է, որ ձիւղ 25 տարի սրանից առաջ, այսինքն 1863 թիւն, հոկտեմբերի 23-ին, ներկայացվեց թիֆլիսում մեր տաղանդաւոր թատերագրող Գարբիէ Սունդուկեանցի պիէսան «Գիշերուան սարը խնդրէ» վերնագրով: Ուրեմն ներկայ հոկտեմբերի 23-ին լրացաւ Սունդուկեանցի գրական գործունէութեան ըստն և հիշատակելու: Այդ 25 տարեկան ընթացքում հրաշալի անգամ ներկայացվեցան ամեն տեղ, որտեղ կան հայեր, Սունդուկեանցի գրականները և հրաշալի սովորներ, հիւրընկալներ, երկրաշարժից վնասվածներ, աղքատ աշակերտներ, չքաւոր ուսանողներ օգտվել են Սունդուկեանցի պիէսանցի ներկայացումներից: Մենք գրանկանում ենք աջողութիւն Սունդուկեանի յօրհանի կատարվելուն, և ի դէպ աւելացնում ենք, որ իր անհատական կերպով, որտեղ որտեղ կ'ուզէր, իր 25-ամեակի լրանալու և տօնելու մասին:

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են: «Բարեկամս դժուար է զօրքի բանակը, որը կայսրի գալտեան պատճառով դնացել էր Միխայիլով, հոկտեմբերի 23-ին, կիրակի, վերադարձաւ Արդահան և այժմ քաղաքը նորից մի տեսակ կենդանութիւն է ըստացել»:

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Այստեղի եղանակները արդէն բոլորովին փոխվել են. երբեմն ձիւն է դալիս, երբեմն անձրև և երբեմն փոքր ամպամած է լինում: Մօտակայ սարերը արդէն ձիւնով ծածկվել են և գիշերները բաւական ցուրտ է լինում: Գետինը արդէն սառչում է և ցերեկով անգամ առանց վերարկուի չէ կարելի տանից դուրս գալ: Տներում սկսել են արդէն վառել»:

Մեզ գրում են, որ հոկտեմբերի 1-ից սկսած փոստային ծանապարհները արդէն բացվել են: Արդահանի, Ախալքալաքի և Ղարսի մէջ, այնպէս որ այդ տարածութիւնները վրա երթնելով են շատ հեշտացել է: Նոր ծանապարհների բացման և փոստային կառքերի հաստատութեան առիթով Ղարսի նահանգապետ, գեներալ Տօմիչ, հոկտեմբերի 16-ին հանձնելով Արդահան, նայեց փոստային կայարանները և ասում են թէ՛ զոհ մնաց տեսածով:

Մտացանք թիֆլիսի Մանկաբարձական դպրոցի բժիշկների հրատարակութեան երրորդ հատորը (ներկայ 1888 թիւ), որը իր մէջ պարունակում է անցեալ 1887 թիւ ընթացքում յիշեալ բժիշկների կայացած նիստերի արձանագրութիւնները և արած զեկուցումները:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ վաղը, չորեքշաբթի, հոկտեմբերի 26-ին, երեկոյեան 7 1/2 ժամին, ընկերութեան անդամները հրաւիրվում են ընկերութեան հերթական ժողովի նիստին: Ընթացիկ գործերի ընթերցումից յետոյ կը կարգացվի Ն. Ն. Շալվորձի զեկուցումը «Նաղդի» հիւանդութիւնների մասին: Կարող են ներկայ գտնվել և կողմնակի անձինք:

Այս օրերս մեր խմբագրատուն եկաւ Երզրումի վիլաէթի Գիլի զեկուցի մի երկրորդ փորձավար Գարբիէ Սունդուկեանցի վարձարաններում վարձապետի պաշտօն է վարել մօտ տասն տարի: Պարոնը թողել է իր պաշտօնը աշխարհի տկարութեան պատճառով, և իր փոքրահասակ որդու հետ եկել է թիֆլիս աչքի կուրութիւնից բժշկվելու համար: Մօտ մի ամիս է նա այստեղ է և բժշկվում է: Նախկին վարձապետը արքայու ոչ մի միջոց չունի, և չը գիտէ ուր գիտել իր և իր որդու համար սպրտաւոր միջոց գտնելու համար և մինչև այժմ սպրտ է թիմակաւ առաջնորդ Արիստակէս Եպիֆանյանի տուած օգնութեամբ: Հրաւիրում ենք թէ թիֆլիսի Բարեկամական Բնկերութեան և թէ մասնաւոր բարեգործ անձանց ուշադրութիւնը երկար տարիներ թիւրքահայոց վարձարաններին ծառայած վարձապետի անողնական գրութեան վրա:

Կիրակի, հոկտեմբերի 23-ին նշանակած հայոց «Գրամատական ընկերութեան» նիստը չը կայացաւ, քանի որ հաւաքվել էին միայն ընկերութեան 7—8 անդամները, որոնք գրեթէ բոլորն էլ ընկերութեան վարչութեան անդամներն էին: Թէև ընդհանուր ժողով չը կայացաւ, բայց որովհետև այդ օրը լրանում էր մեր բնական գրականութեան համար ամենից շատ գործող Գարբիէ Սունդուկեանցի գործունէութեան ըստն հիշատակելու, այդ պատճառով լաւ համարվեց կացուցանել վարչութեան նիստը, որի ժամանակ վճռվեց հետեւեալը. 1) ընտրել մի յանձնաժողով տօնելու Գարբիէ Սունդուկեանցի գրականակն ընթացքում հրաշալի անգամ ըստն հիշատակելու: 2) Տօնախմբութեան օրը նշանակել 1888 թ. դեկտեմբերի 22-ին. 3) պարտաւորեցնել յանձնաժողովին, որ այդ օրը ներկայացնի Գ. Սունդուկեանի «Ամուսնանք» անունով նոր կօմիդիան և «Գիշերվայ» սարը խնդրէ: 4) Վոլովել, որ առաջին անգամ ներկայացվեցաւ թիֆլիսի քաղաքային թատրոնում 1863 թիւ հոկտեմբերի 23-ին. 5) ներկայացման արդիւնքը գործադրութեան իրաւունքը վերապահել Գ. Սունդուկեանցին. 6) ընկերութեան անդամները ընդհանուր ժողովին առաջարկել ընդունել Գ. Սունդուկեանցին ընկերութեան պատուաւոր անդամ: Զանձնաժողովի նախագահ ընտրվեց պ. Ես. Փիլիպոսյան, փոխ-նախագահ Իլիան Ն. Ամատունի, անդամներ պ. պ. Գ. Փիլիպոսյան, Մ. Թաւադեան, Զ. Տէր-Յովհաննիսեան, Մ. Թաւադեան և Ա. Թովհաննիսեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԿԱՐՏԻՔ ԵՒ ՍՊԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆ

Եւրոպական մի ըստի պետութիւնների մէջ սպառազինութեան գործը առաջ է դնում, և կառավարական շրջաններում նորանոր նախագծեր են կազմվում զինուորական ուժը մեծացնելու համար: Գերմանիան և նրա հետ միասին Աւստրիան այդ ուղղութիւնն մէջ առաջին տեղն են ընդունում: և այդպիսով իրանց ընթացքով աւելի էլ մեծացնում են այն տագնապը, որը այսօր տիրապետում է պետութիւնների յարաբերութիւններին մէջ:

Գերմանական և աստորիական կառավարութիւնները կիսապաշտօնական օրդանները աւելի էլ վերելով այդ տրամադրութիւնը ամեն օր նոր ուժով են զրգում հասարակաց կարծիքը և աւելացնում դուր երկիւղը:

Բարեբաղդաբար Աւստրիայում, այլ և Գերմանիայում հասարակաց կարծիքը այնքան հասունացած և ինքնուրույն է, որ շատ էլ չէ համակրում սպառազինական այդ ձգտումներին, և յարմար դէպքերում ցոյց է տալիս իր անհամաձայնութիւնը այդ ընթացքի հետ: Եւ չէ կարելի չը նկատել, որ հասարակաց կարծիքը այդ տրամադրութիւնը մի զգալի արդեւ է կառավարական տրամադրութեան առաջ:

Գերմանիայում աստորիական այնպիսի աղդեցիկ կիսապաշտօնական օրդանը, ինչպիսին է «Fremdenblatt», մասնաւոր ընկերութիւն է: «Fremdenblatt»-ը միայն իր քանի երեւոյթները վրա, այն կարծիքն էր յայտնում, որ վրանդը միմեանում է: Աւստրիական մամուլի նշանաւոր օրդաններից մէկը՝ «Neu-Freie Presse», պատասխանելով կիսապաշտօնական օրդանների այդ նկատուղութիւններին, յայտնում է, որ դրա աղդեցութիւն չեն կարող գործել հասարակաց կարծիքի վրա: Ինչ նշանակութիւն ունի երեւոյթներն զանապետութիւնը, — հարցնում է լրագիրը, — թէ զանազան փոքրիկ ուժերը պէտք է կարողանան խախտել պետութիւնների խաղաղութիւնը: Կառավարական օրդանները մի ժամանակ հաւատարմութիւն էին, որ երեւոյթներն զանապետութեան նպատակն է պահպանել խաղաղութիւնը, բայց, ինչպէս երևում է, նա իր այդ նպատակին երբեք չէ ձգտում, և հասարակաց կարծիքը շատ այդքան ծախքեր անելուց յետոյ էլ՝ Եւրոպայի խաղաղութիւնը չ'ապահովել է կալոված: Եւ հէնց այդ պատճառով եւրոպական միւս պետութիւններն էլ՝ տեսնելով երեւոյթների զանապետութեան այդ ընթացքը, իրանք էլ շարունակում են սպառազինվել. նոյն իսկ Ֆրանսիան, ինչպէս երևում է վերջին հեռագրական տեղեկութիւններից, աւելի է զինաւորվում: Ֆրանսիական զինուորական միւստերը նորերս 548 միլիոն ֆրանկի նոր փոխառութիւն խնդրեց՝ պատերազմական արտաւարդ ծախքերի համար, — և հէնց այդ էլ այժման սպառազինական տագնապի հետեւնը: Ներքից մէկը:

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու հասարակաց կարծիքը չէ կարողանում հաշտվել այդ սպառազինական ուղղութեան հետ, և հաստատ խաղաղութիւն ցանկանալով՝ դէմ է ամեն տեսակ դաշնակցութիւններին և զինուորական նոր նախագծերին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՆՑ

Տրապիզոն, 18 հոկտեմբերի

Վեր ստացած հաստատ տեղեկութիւններին համեմատ, իտալական կառավարութեան ծախքով պիտի բացվին Տրապիզոնում, մօտ ապագայի մէջ երկու միջնակարգ ուսումնարան, մին օրիորդաց և միւսը տղայոց համար. բացի դրանից պիտի հիմնվի մի և նոյն արքիւրից՝ մի հիւանդանոց, ուր պիտի ընդունվին ամեն կարգի հիւանդներ: Այս երեք հաստատութիւնների համար ծախք որոշված է տարեկան 45,000 ֆրանկ: Սպասում են շուտով իտալական ուսուցիչներին, վարձուհիներին, բժիշկներին և այլ պաշտօնեաներին: Տրապիզոնում արդէն գոյութիւն ունի լատին կրօնաւորների մի դպրոց՝ արական սեռի համար, այս կրօնաւորները Վ. Թովսէֆայ եղբայրները՝ կոչված կարդիցն են և ֆրանսիացի: Իսկ իտալիան, որ այժմ ճգնում է մրցել Ֆրանսիայի հետ արեւելեան քաղաքականութեան մէջ, և հասկանալի է, ի հարկէ, Տրապիզոնի նշանակութիւնը, որ Ս. Ժովի եղբրի վրա առաջին տաճկական քաղաքն է իր միջնորդի դիրքով: Կ. Պոլսի և Եւրոպայի, Կարնի և Պարսկաստանի հետ ունեցած յարաբերութիւնների մէջ, ուժգին կերպով հարուած է ուղում տալ ֆրանսիական աղդեցութեան Տրապիզոնում իր այս ընթացքով: Եւ ըստ պէտք չէ տարակուսել, որ երկու եւրոպական տեղութիւնների այս մրցման առաջին դոսերը հայերն են լինելու: Արդէն Տրապիզոնի ֆրանսիական դպրոցի աշակերտները ստուար մեծամասնութեամբ հայեր են. յոյներ և թուրքեր շատ քիչ են յաճախում: Թէ որքան աջողութիւն կունենայ իտալական դպրոցը՝ մանաւանդ թուրքերի մէջ, դժուար է այժմանից որոշել. յամենայն դէպս հաստատութեամբ կարելի է նախատեսել, որ այս նոր եւրոպական դպրոցների զլխաւոր աշակերտները հայ տղան ու հայ օրիորդ կը լինեն դարձեալ:

Տեղական աղգային ուսումնարաններից ոչ լուսաւորական և ոչ կաթօլիկ հայերի ուսումնարանները կը կարողանան դիմադրաւ լինել եւրոպական տեղին և գիտութեան: Եթէ փոքր ինչ հաւատարակութիւն կարող է պահպանել, այդ էլ վերնախիւ Միսիթարեանների այստեղ բացած դպրոցն է, որ անհերկու տարի է, յաջողութեամբ շարունակում է իր ընթացքը: Կաթօլիկ հայերը տեսնելով իրենց անկարողութիւնը՝ փակեցին իրանց ծխական դպրոցը և ուղարկում են իրանց օրդոց Միսիթարեանների մօտ:

Մերան ունեն այժմ մօտ 150 աշակերտ, մեծամասնութիւնը հայ-կաթօլիկ, կան նաև լուսաւորական հայ աշակերտներ, նոյնպէս և այլ աղգիւրից, ինչպէս յոյն և թուրք: Վ. Թովսէֆայ եղբայրների՝ յաջողութեան զլխաւոր գաղտնիքը կայանում է նրանում, որ իրենց դպրոցում ուսումը ֆրանսերէն է աւանդվում և հետեւաբար աշակերտները շատ շուտով են ընտելանում այդ լեզուին: Իսկ տաճկաստանցոց համար, մանաւանդ գաւառացոց՝ ով որ ֆրանսերէն խօսել գիտէ, նա արդէն ամեն ինչ գիտէ, ամեն ուսումը վերջացրած է, թէ վաճառականական և թէ պետական ծառայութեան ասպարէրում շատ դիւրութեամբ կարող է պաշտօն ունենալ, միով բանիւ նա կրթեալ անձ է և գրեթէ և եւրօպացի է... Բայց թէ իրօք՝ այդ ֆրանսիական կամ այլ համանման դպրոցներն, որ բացվում են հեշտութեամբ ծաղկում են Տաճկաստանի գաւառներում, միմիայն արտաքին փայլով են շլացնում իրենց յաճախորդներին, թուրքիկ նման ֆրանսերէն խօսեցնելով նրանց և ոչինչ հիմնաւոր կրթութիւն են տալիս, այս կէտն ոչ ոք ուշադրութեան է առնում: Այս կերպ հասկացողութիւնը շատ ընդհանրացած է զգալիաբար մեր հայերի և մանաւանդ կաթօլիկների մէջ: Միսիթարեանները փորձեցին ֆրանսերէնի մէջ էլ մրցել Վ. Թովսէֆայ եղբայրների հետ, կամ «Փրէր»-ները հետ, ինչպէս սովորութիւն ունեն Տրապիզոնից ասել, և այս նպատակով հրաւիրեցին Մարտիկայից մի ֆրանսիացի ուսուցիչ, որ գիշեր, ցերեկ ուսումնարանումն է գտնվում, բայց տրապիզոնից դարձեալ դոհ չեն...

Իսկ լուսաւորական հայերն բարի եռանդ ունեն իրենց աղգային ուսումնարանը յառաջանելու, թէպէտ մրցման մտքից դեռ հեռու են, սակայն միաբանութիւն է պահում իրենց: Առաջնորդի բացակայութիւնը նոյնպէս զգալի է դպրոցական դործի զանդաղ ընթացքին:

Ա. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— Սերբիական թագաւոր Միլանի մանիֆեստը, ինչպէս հեռագրում են վիեննայից, շատ էլ որոշ տպաւորութիւն չէ թողել, և աստորիական մամուլի մի մասը կասկածով է վերաբերվում դէպի Միլանի այն նախագիծը, որը վերաբերում է սահմանադրութեան կերպարանափոխութեանը:

— Կոմս Անդրաշի, ինչպէս երևում է հեռագրական տեղեկութիւններից, ծանր հիւանդ է:

— Բոլգարական աղգային ժողովի այս նստաշրջանում առանձին տպաւորութիւն է դարձնում հաղորդակցութեան ծանապարհների հարցի և քրէական օրէնքների մշակման վրա:

— Նորերս վիլնիւ կայսրը պատասխանելով իրան ուղղած մի ճառին, ասեց հետեւեալը. «Հանդիսաւոր խոստում եմ տալիս հետեւ իմ օգոստոսիան հօր ընթացքին»: Այդ խօսքերը առանձին ուշադրութիւն են գրաւել, որովհետև վիլնիւ կայսրը գտնէ մինչև այժմ իր հանգուցեալ հօր ընթացքին չէր հետևում:

— Ջանգիլաքի հարցը, ինչպէս գրում են Լօնդոնից, կարող է կուլ գցել Անգլիայի և Գերմանիայի մէջ: Սալաւորին չէ հաւանում երկաթէ կանցլերի գաղթական քաղաքականութիւնը և ինչպէս երևում է, մտադիր չէ ոչ մի գիշում անելու, իսկ Գերմանիայի անաշտութիւնները այդ հարցում միանգամայն վշտացրել են իշխան Բիսմարկին:

— Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Գոբլէ շնորհաւորեց առաջ արտաքին գործերի մի-նիստը Գիլիսի յօրհանքը: Մինիստր Գիլիս շնորհակալութիւն է յայտնել այդ առիթով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի: Նոյա կայսերական Մեծութիւնները թագաւոր կայսրը, Թաւուհի կայսրուհին, Թաւաթառնազը և միւս օրդոստափաւ երեխաները այսօր հասան Գառչինո:

ԿՐՈՆՇՏԱՏ, 21 հոկտեմբերի: Պետերբուրգի հետ նաւազնացական հաղորդակցութիւնը ընդհատված է:

ՎԷՐՆԻՑ, 21 հոկտեմբերի: Երեկ, Կարա-Կոյում վախճանվեց ծանապարհորդ Պրոֆակալի: Մահից առաջ նա խնդրեց իրան թաղել Խիլ-Կուլ լճի:

ախին: Այդ մասին կարգադրութիւն է արված: ՊԵՏԵՐՈՒԳ, 22 հոկտեմբերի: Երէկ երեկոյան բերկեցան 14 դահլիճներ՝ Արքայական գնացքի կործանման ժամանակ սպանվածների զինակներով: Կարճ ծխակաւորութիւնից յետոյ, դահլիճները դրվեցան 14 սայլերի վրա, և ուղեկցվելով ողբացող ծնողներով, տարան փողոցներով ուր խոնաված էր բազմութիւն: Այսօր տեղի պիտի ունենայ թաղում: «Правит. Вѣст.» հաղորդում է նոր մանրամասնութիւններ արքայական գնացքի կործանման մասին: Ամենից առաջ ընկնելից դուրս եկաւ հաղորդակցութեան ճանապարհներով մինիստրի վազոնը: Ամբողջ գնացքից փրկվեցան միայն երկու առաջին և երեք յետին վազոնները: Սեղանատուն—վազոնը դարձել էր մի այնպիսի կոյտ, որ ճանաչել չէր կարելի. անիւների ամբողջ շարքը մի կողմ էր դրված. պատերը կտրուկ և մանր կտորներ էին դարձել. կտուրը, որ մի կողմ էր թեքվել, ծածկել էր վազոնի մը: Նացորդները: Նոյն վազոնում, բռնկեցին, սպանված էին սպասուորները: Այն, վազոնը, որի մէջ զանգում էր Մեծ խնամուկը Օլգա Ալեքսանդրովնա, շուտ էր եկել, առաջին մասը պոկվել էր և բացուածքի միջից դուրս էր նետվել Մեծ խնամուկը Մեծ խնամուկի նոյնպէս դուրս էին նետված: Սպանվածներին և վիրաւորվածներին որոնելու ժամանակ, կայսրը, չը նայած ոտի հարուածին, կարգադրում էր ամեն բան: Կայսրուհին ուղք չը դարձնելով վիրաւորված ձեռքի վրա, օգնութիւն էր հասցնում աւելի վնասվածներին: Թիկնապահներին, ֆիլդել-ադմուտնո Շերեմետևի մատի մի մասը պոկված և և կտրված ջարդված: Ֆիլդել-ադմուտնո Վազոնը վազոնի ստացել ոտի վրա. գեներալներ՝ Վորոնցով-Կաշայով, Վանսովսկի, Դանիլովիչ, Բիխտեր և Չերեվին ստացել են բաւական վէրքեր: Ենթադրում են, որ գնացքի կործանումը առաջ է եկել կամ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի վազոնի կտրուկից, հողաբլուրի ցածանալու պատճառով, և կամ փոսած չալներին: Թագաւոր կայսրը անձամբ յանձնեց ժանդարմների օֆիցերին փոսած չալի մի մասը, քննութեան ժամանակ ներկայացնելու համար:

ՍՕՖԻԱ 23 հոկտեմբերի: Ազգային ժողովի անդամները մասնաւոր գումարման ժամանակ Ստամբուլով ասեց, որ չի թողնի իր պաշտօնը, որ եթէ ինքը կը հեռանայ՝ Բոլշակովնա կը կործանվի, որ ինքը մտադրում է կառավարել Բոլշակովնա երկրթէ խտութեամբ, որովհետև ուրիշ կերպ կառավարել չէ կարելի: Ստամբուլովի յանդուգն ճառը ցոյց է տալիս կառավարչների մտադրութիւնը՝ պահանջել ժողովից կոյր հնազանդութիւն:

ԲԵԼԳԻԱ, 23 հոկտեմբերի: Թագաւորի առաջարկութեամբ սահմանադրութեան վերաքննութեան յանձնաժողովը միաձայն վճռեց, վերաքննութեան չենթարկել այժման սահմանադրութիւնը, այլ մշակել մի բոլորովին նոր սահմանադրութիւն:

ՊԵՏԵՐՈՒԳ, 24 հոկտեմբերի: Այսօր Նոյա կայսերական Մեծութիւնները Գառչիւնից եկան Պետերբուրգ: Քաղաքը զարդարված է դրօշակներով: Փողոցները վրա կարողով կանգնած էին զօրքերը և զինուորական զարդերի աշակերտները: Կայսրանու Նոյա Մեծութիւններին դիմաւորեցին բարձրաստիճան պաշտօնեաները և դասակարգային պատգամաւորութիւնը. աղքատներ մատուցվեցան Պետերբուրգի ազնուական և քաղաքի կողմից. Թագաւոր կայսրին մատուցին սուրբ պատկերներ՝ զվարդիայի զօրքերի կողմից զվարդիայի զօրքերի հրամանատար Օլգին-բուրգեան պրինցը և քաղաքի կողմից՝ քաղաքապետ Պալիսկինի կողմից: Ողորմածաբար շնորհակալութիւն անելով, Նոյա Մեծութիւնները բազմութիւնով գնացին Կազանսկի մայր եկեղեցին: Նոյա Մեծութիւնների անցնելու ճանապարհի վրա շարքով կանգնած էին զօրքերը, հրապարակների վրա կանգնած էին ուսումնարանների աշակերտները: Ժողովուրդը արտակարգ ոգևորութեամբ դիմաւորում էր Թագաւորին և Թագուհուն: Նոյա Մեծութիւնների Կազանսկի մայր եկեղեցուց հեռանալու ժամանակ, ուսումնարանների աշակերտները, համալսարանի ու զինուորական մէղիկօ-

խիրուղիական աղաղակային ուսանողները «ուրալի» աղաղակներով ճանապարհ դնեցին կառքը մինչև Անիկովնան պալատը: Պետր-Պալլովսկի մայր եկեղեցում աղօթելուց յետոյ, Նոյա Մեծութիւնները վերադարձան Գառչիւն: Քաղաքը երկուսիս հրաշալի կերպով լուսաւորված էր Ուսումնարանների աշակերտներին երեք օր արձադուրդ է արված:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ մանիֆէստ, հոկտեմբերի 23-ին: Նախախնամութեան անհատանիլ ճանապարհներով կատարվեցաւ Մեղ վրա Աստուածային ողորմութեան հրաշագործութիւնը: Այնտեղ ուր մարդկային փրկութեան վրա յոյս չէր մնացել, Տէր Աստուծուն հաճելի էր հրաշալի կերպով պահպանել Մեր, Կայսրուհու, Թագաւորանդի և Մեր բոլոր երեխաների կեանքը: Թող միանան Մեր բոլոր հպատակների աղօթքները առ Աստուած ուղղելով Մեր դոհարանական աղօթքների հետ Մեր փրկութեան համար: Երկուշաբթի ջերմութեամբ Ամենաբարձրելի Նախախնամութեան առաջ, Մեք հաւատում ենք, որ Մեզ և Մեր ժողովրդին յայտնված Աստուածային շնորհը պատասխան է այն ջերմ աղօթքներին, որ ամեն օր ուղղում են մեզ համար Ուսումնարանի հաղաւոր հաւատարմի որդիքը ամեն տեղ, ուր կայ սուրբ եկեղեցի և ուր փառաբանվում է Քրիստոսի անունը: Աստուածային Նախախնամութիւնը, պահպանելով Մեր կեանքը, որը նուիրված է Մեր սիրեցեալ հայրենիք բարբորութեանը, թող տալ Մեզ և զօրութիւն հաւատարմի կերպով մինչև վերջը հասցնել մեծ ծառայութիւնը, որի համար նրա կամքով Մեք կօչված ենք:

ՎՕԼՍԿ, 24 հոկտեմբերի: ՎՕՂԿԱՅԻ վրա սահմանադրութեան, նախաքննարկութիւնը դադարած է:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, ԲՕՐՍԱ
Հոկտեմբերի 21-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	94	50
Համբուրգի վրա 100 մարկ —	46	25
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37	—
Ոսկի — արծէ —	7	59
Մարսայի կուպոններ —	151	50
Արժաթ —	1	17
Բորսայի դիսկոնտներ —	7	80
Պետական բանկ. 50/100 տոմս 1-ին շրջանի	97	87
— — — — — 2-րդ —	98	12
— — — — — 3-րդ —	97	—
— — — — — 4-րդ —	97	—
— — — — — 5-րդ —	97	50
— — — — — 6-րդ —	—	—
Նոր 40/100 փոխառութիւն.	82	62
Արևելեան 50/100 փոխառութիւն. 1-ին շրջ.	96	87
— — — — — 2-րդ —	97	—
— — — — — 3-րդ —	96	75
Ներքին 50/100 առաջին փոխառութիւն.	268	75
— — — — — երկրորդ —	240	75
51/20/100 ընդամ.	101	50
Ոսկեայ բէնտ.	173	25
Եթերը դիսկոնտիւրմ փոխառութիւն.	144	50
Նոր երկաթուղային բէնտ.	96	50
50/100 գրաւական թղթեր կալուած.	—	—
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետ.	147	50
— — — — — թղթագ.	91	25
— — — — — 96	50	—
Գրաւ. թղ. Աշու. բանկի	97	50
51/20/100 գրաւական թղթեր խնդրանքի կալուած բանկի.	100	—
60/100 գրաւակ. թղ. խնդրանքի կալ. բան.	100	—
— — — — — Պոլտավայի —	100	—
— — — — — Պետ. Տուրքի. —	100	—
— — — — — Կիևի —	100	37
— — — — — Մոսկվայի —	99	—
— — — — — Բեսարաբ. Տուրք. —	99	75
— — — — — Նիս. Մամար. —	100	—
— — — — — Վիենայի —	98	62
— — — — — Թիֆլիսի — 1/4 և 43 տ. —	97	—
— — — — — Գոթթայի — 1/8 և 43 տ. —	97	—
ՎՕՂԿԱՅԻ-Կազանի բանկի ակցիաները 665	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 233	—	25
Ռիբնակ-Բոլոգոյի ընկ.	81	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլ. գաղաներ.	91	75
Մոսկվայի քաղաք. օբլ. գաղաներ.	91	75
Օղէսայի	92	—
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքի արամադրութիւնը ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ
„Ա. ՓՐԻԴՆՈՎ ԵՒ ԸՆԿ.“

Գնում է և վաճառում: տոկոսաբեր թղթեր, փոխարկում է փողեր և ապահովագրում է I և II ներքին խաղարկութեամբ փոխառութիւնների տոմսները ԵՕԲԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ Կօպէկով:

Պ.պ. օտարադաշտացիներին գրասենյակը խնդրում է ուղարկել փոստի ծախսը և 15 կօպ ամեն մի անդորրագրի դրուագաւոր մարկայի համար: 3—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ԲԱՆԱՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 28 հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շաբաթու. EBBE (ԷԲԲ) նաւապետ VERNET (ՎԵՐՆԵ) մանկելով Կ. Պօլիս, Զմիւռնիա և Սիրա:

Աղէտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՇԵԻ, խսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՌԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ: 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ԲԱՆԱՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, հոկտեմբերի 27-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շաբաթու. նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմուրդուի տան, Նաբեթէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար. Տրուսի գալլիերում: № 103. 3—3 (2. հ. Ե.)

ԱԶԳԱՑԱԻՈՎ Հիւանդների ընդունելութիւնը բժշկապետ ԲԵՏԻ մօտ վերանորոգված է:

ՆՈՐ բնակարանը՝ Գրիբոեդովսկայա փողոց, Խարազովի տուն, № 3:

Ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 10 ժամ: 3—4. (2. Ե.)

ԽԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԼԻԹԻ ՄԷՋ ԻՇՇՈՑ

Ինչպէս ազատվել այդ ցաւից: Պէտք է նամակով դիմել բացատրութիւններ պահանջելու համար, Փարիզ, պ. Նիկոլսոնի, հետեւեալ հասցեով. Парижъ (Франція) Nicolson, rue Drouot, Paris. 6—6

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՊՐՕՎԱՆՍԱՅԻՆ ԻՈՂ
ԳԻՏՈՒՆ-ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առեւտրականների մօտ. Մօսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրա: № 6. Ս. Կ. Օ. (3—3)

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄԻՄ

(Ցերկօվսկայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնուելում է Լօբկօ և ընկ. տպարանը)

Պատու. ունեւ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄԱ. ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆԱՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԵԻ մի ՊՐՕՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում Գործարանի ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ջրվիշի հաշակաւոր ՖԻԼՏՐ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրօվիզօրը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում Դնոբնով այն օ- ժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլեքերան, մրգային և զաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՒՆԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Լամի, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թաքմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամօթաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժիկի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածաշրջաններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարանների կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը: